

ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին խորհրդարանական մեծամասնությանը եւ լրագրողներին վարչապետի պաշտոնում որպես իր փոխանորդը անվանեց ներքին գործերի նախարար Իրակլի Գարիբաշվիլուն: Դեռ նա էլ խորհրդարանի հաստատմանը կենդանի մնալու հետո, երբ նոյեմբերի 24-ին Բիծինա Իվանիշվիլին պաշտոնաթող կլինի:



Ինչպես հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին, ինքը տեղափոխվում է քաղաքացիական հատված, որտեղից, իր խոսքերով, կհետեւի կառավարության գործունեությանը: Բիծինա Իվանիշվիլին նշեց, որ հանձնիմ Իրակլի Գարիբաշվիլու եւ

Գիորգի Մարգվելաշվիլու, Վրաստանը կունենա արժանավոր եւ վարչապետ, եւ նախագահ: «Ի վերջո, մենք կունենանք գործուն կառավարություն եւ մենք կկատարենք ժողովրդի պատվերը: Մենք ունենք իր»

ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՍԱՅՄԱՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ

Վրաստանի նախագահի երդմնակալության արարողությունը, որը նշանակված է նոյեմբերի 17-ին, կսկսվի ժամը 13:00-ին: Այդ մասին նոյեմբերի 6-ին տեղեկացրեց Վրաստանի ԱԳ նախարարությունը:

Վրաստանի նորընտիր նախագահի երդմնակալության արարողությունը կկայանա Թբիլիսիում, խորհրդարանի հին շենքի բակում եւ կտևի 45 րոպե: Արարողությունից հետո նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ծաղիկներ կդնի Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհված հերոսների հուշահամալիրին: Այնուհետեւ Radisson Blu Iveria հյուրանոցում տեղի կունենա պաշտոնական ճաշերույթ, որը ընտրված նախագահը կտա ի պատիվ պաշտոնակալության արարողության առթիվ Վրաստան ժամանած օտարերկրյա պատվիրակությունների ղեկավարներին: ճաշերույթին կհաջորդեն Գի-

որգի Մարգվելաշվիլու երկկողմ հանդիպումները արտասահմանյան պատվիրակությունների ղեկավարների հետ: Երեկոյան Շոթա Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնում կկայանա Վրաստանի նախագահի պաշտոնակալման արարողությանը նվիրված գալա համերգ: Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեի հայտարարությամբ, Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շելարոյանի եւ պետության գործող նախագահ Սիխեիլ Սաակաշվիլին հրավիրվել են նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու երդմնակալության արարողությանը:

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎԻԼՆՅՈՒՄԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄԱԿԱՆ Է»



Վրաստանի նախագահական ընտրություններում հաղթանակ տարած Գիորգի Մարգվելաշվիլին, Վրաստանի համար պատմական է համարում «Արեւելյան գործընկերության» Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովը եւ հուսով է, որ Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը կստորագրվի մեկ տարվա ընթացքում:

Երդմնակալության արարողությունից հետո, որը տեղի կունենա նոյեմբերի 17-ին, Մարգվելաշվիլին առաջին արտասահմանյան այցը կկատարի Լիտվա: Նա կվախժարի վրացական պատվիրակությունը «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովում:

վում, որը տեղի կունենա նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում: Գագաթաժողովի ընթացքում սպասվում է ԵՄ-ի հետ Վրաստանի ասոցիացման համաձայնագրի նախատրագրումը:

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ՃԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ

Երկրի ղեկավարի պաշտոնից հեռացող Վրաստանի նախագահ Սիխեիլ Սաակաշվիլին, նոյեմբերի 6-ին Վրաստանի քաղաքացիություն ստանալու ցանկացողներին կոչ արեց շտապ կարգով համապատասխան փաստաթղթերով դիմել նախագահի վարչակազմին:

Իսկ մինչ այդ, նոյեմբերի 4-ին նախագահի աշխատակազմի ղեկավար Անդրո Բարնովը հայտարարեց, որ նրանցից շատերը, ովքեր կցանկանան ստանալ Վրաստանի քաղաքացիություն, անհասկանալի պատճառներով երկրի արդարադատության նախարարությունից մերժում են ստացել: Այդ կապակցությամբ Սիխեիլ Սաակաշվիլին խոստացել է բոլոր ցանկացողներին քա-



ղաքացիություն չընդունելու քաղաքականություն, որը պատրաստ ենք քաղաքացիություն շնորհել յուրաքանչյուր ցանկանողին: «Քանի դեռ նախագահական վարչակազմը հանդիսանում է ներկայիս նախագահի աշխատակազմ, մենք պատրաստ ենք քաղաքացիություն շնորհել բոլոր նրանց, ում իրականում այն հասնում է: Մենք շտապում ենք, մեր աշխատանքները աշխատում են 24-ժամյա աշխատակարգով, ուրպեսզի հասցնեն ամեն ինչ ամել»,- հայտարարեց Սիխեիլ Սաակաշվիլին: Նրա խոսքերով, Վրաստանի իշխանությունները (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՏԱՎԱՅՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱԴԵՍ ԿՏԵՂԱԿԱՅՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԵՆՅԱԿՈՒՄ

Թբիլիսիում Վրաստանի նախագահի պալատում, որտեղ այժմ գործում է Սիխեիլ Սաակաշվիլու վարչակազմը, պետության նոր նախագահի պաշտոնակալությունից հետո, ենթադրաբար կտեղափոխվի կամ վրաց-ամերիկյան համալսարանը, կամ Ազգային ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտը:

մաստավայրում եւ մեկ անգամ չէ, որ հայտարարել է այդ մասին: «Վրացական երազանք» կուլիցիայի քաղաքացիական անաջարկել են այդ շենքում տեղափոխել համալսարանը»,- ասաց Մարգվելաշվիլին:

Այս մասին հայտարարեց հոկտեմբերի 27-ի ընտրությունների արդյունքում ընտրված երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: Նա նշեց, որ ինքը «չի ցանկանում աշխատել մասն պերճաշուք»

խագահ Գիորգի Մարգվելաշվիլին: Նա նշեց, որ ինքը «չի ցանկանում աշխատել մասն պերճաշուք»

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Նոյեմբերի 4-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թեմուր Շարմանաշվիլին եւ դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Պ.Դեղդրիանին, վերջինիս Հայաստանում հավատարմագրման առիթով, հանդիպում ունեցան Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ:

Պաշտպանության նախարարի հետ հանդիպումից հետո նորանշանակ ռազմական կցորդը Հայաստանի պաշտպանության նախարարության ՊՔ վարչությունում հանդիպում ունեցավ վարչության պետ Լ.Այվազյանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին վրաց-հայկական երկկողմ ռազմական համագործակցության հարցեր, ինչպես նաեւ նախանշվեցին համագործակցության հետագա զարգացման ուղիները:



ՀԱՎԱՍՏԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԺՆԵԿԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՈԼՈՐ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐԸ

Ժնեկի հերթական բանակցություններին վրացական կողմը բարձրացրեց Ռուսաստանի կողմից ուժի չկիրառման, Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի վարչական սահմանների ազատ հատման եւ անվտանգության հետ առնչվող հարցեր:

վիթ Ջալկալիանին: Հիշեցնենք, որ ժնեկի բանակցությունները անցկացվում են 2008 թվականի հոկտեմբերից Վրաստան:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի ԱԳ առաջին փոխնախարար Դավիթ Ջալկալիանին: Հիշեցնենք, որ ժնեկի բանակցությունների հերթական 25-րդ ռաունդը նոյեմբերի 5-6-ին, վրացական պատվիրակությունը գլխավորում էր Դավիթ Ջալկալիանին:

վիթ Ջալկալիանին: Հիշեցնենք, որ ժնեկի բանակցությունները անցկացվում են 2008 թվականի հոկտեմբերից Վրաստան:

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՔԻՍԱԶԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԶԻ ԱՏՈՐԱԳՐԻ

Վրաստանը երբեք չի համաձայնվի Աբխազիայի հետ ստորագրել ուժի չկիրառման պայմանագիր:

բի հայտարարությունը: Զիրիկբին ենթադրել էր, որ Վրաստանի եւ Աբխազիայի միջեւ ուժի չկիրառման համաձայնագիրը հնարավոր կլինի:

վեցին համագործակցության հետագա զարգացման ուղիները:

ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՊՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անալի իշխանություն է վրաց հասարակություն, որանով կարող ենք հպարտանալ»,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:


Իր հերթին, վարչապետի թեկնածու Իրակլի Ղարիբաշվիլին խոստացավ շարունակել Իվանիշվիլու ուղին և հնարավոր ամեն ինչ անել այն նպատակներին հասնելու համար, որոնք կառավարությունը առաջադրել է ժողովրդին: «Ես կլինեմ Բիծինա Իվանիշվիլու հայտարարած նպատակներին ու սկզբունքներին հավատարիմ և խոստանում եմ, որ կգործեն ի բարօրություն երկրի»,- հայտարարեց նա:

Նշենք, որ Վրաստանի նոր կառավարությունը կներկայացվի նոյեմբերի 17-ին ծրագրված նախագահական երդմանակալության արարողությունից եւ նոյեմբերի 24-ին վարչապետ Բիծինա Իվանիշվիլու պաշտոնաթողությունից հետո: Վրաստանի իշխանությունները ցանկանում են, որ նոյեմբերի 27-ի համար «Արեւելյան գործընկերության» հարցով եվրամիության գազաթափուկի վրաստանը ներկայացնի նոր նախագահին և վարչապետին:

«Իրակլի Ղարիբաշվիլին մեր հասարակության աչքի ընկնող ու արժանավոր անդամն է»,- հայտարարեց Վրաստանի նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: «Միասնական ազգային շարժումը» մտադիր չէ Վրաստանի վարչապետի պաշտոնում պաշտպանել Իրակլի Ղարիբաշվիլու թեկնածությունը: Ազգային շարժման ներկայացուցիչները նրան համարում են Իվանիշվիլու անձնակազմի կադրեր և խոստանում են ՆԳ նախարարի պաշտոնում նրա կողմից թույլ տված թերացումների մասին:



Մյուս կողմից, Գիորգի Մարգվելաշվիլին աստիճանաբար արթնանում է հարցին: «Շուտով ենք, որ 2014 թվականի աշնանը մենք արդեն կկարողանանք ստորագրել այդ համաձայնագիրը»,- նշեց Մարգվելաշվիլին:



ՄԱԿ

ԴԻՍԵՆ ԵՆ ՋԻՆԱԴԱԴԱՐԻ ԿՈՉՈՎ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը դիմել է բոլոր երկրներին՝ արձագանքելու Սոչիի Օլիմպիադայի ընթացքում գլոբալ զինադադարի կոչին, որը տեղ է գտել համաշխարհային կազմակերպության Գլխավոր ասամբլեայի նոյեմբերի 6-ին ընդունված բանաձևում:

Ռուսաստանի և Հունաստանի կողմից նախաձեռնված բանաձևի համաձայն, զինադադարը պետք է հայտարարվի մրցումների սկսվելուց մեկ շաբաթ առաջ և ավարտվի Պարալիմպիական խաղերի ավարտից մեկ շաբաթ անց: Նման բանաձևը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ հերթական Օլիմպիական խաղերի նախաձեռնմամբ:

ՖՐԱՆՍԻԱ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՂՈՎԸ

Փարիզում նոյեմբերի 5-ին մեկնարկեց ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) Գլխավոր խորհրդաժողովը: Ֆրանսիայի մայրաքաղաքում հավաքվեցին կազմակերպության մասնակից 195 երկրների ներկայացուցիչներ:

Օրակարգի գլխավոր հարցերն են՝ առաջիկա հնգամյա շրջանի բյուջեի ընդունումը և մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում կազմակերպության ռազմավարության հաստատումը:

Նոյեմբերի 12-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր խորհրդաժողովում կկայանա Իրինա Բոկովայի՝ որպես երկրորդ ժամկետով գլխավոր տնօրենի, թեկնածության հաստատումը: 2009 թվականին միջազգային կազմակերպությունը գլխավորած Բոկովան ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի կողմից նոր ժամկետով վերընտրվել է հոկտեմբերին:

ԻՐԱՆ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՐՋ ՓՈՒԼ ԵՆ ԹԵՎԱԿՈՒՆԵԼ

Իրանի և «Վեցյակի» (ՄԱԿ-ի Աև-ի մշտական հինգ անդամներ և Գերմանիա) բանակցությունները մտել են շատ լուրջ փուլ: Կողմերը պայմանավորվել են պահպանել գաղտնիությունը: Այդ մասին հայտնել է Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով զբաղվող Ներկայացուցչի մամուլի քարտուղար Մայքլ Սանդը:

Նշենք, որ Իրանի և միջազգային միջնորդների «Վեցյակի» բանակցությունների հերթական փուլը մեկնարկեց նոյեմբերի 7-ին ժնեբում: Հանդիպմանը մասնակցում են Եվրամիության, Իրանի, ինչպես նաև «Վեցյակի» երկրների ներկայացուցիչները:

Սա վերջին երեք շաբաթվա ընթացքում նման ծեսաչափով երկրորդ հանդիպումն է: Նախորդը նույնպես տեղի է ունեցել ժնեբում հոկտեմբերի 15-16-ին:

ԳԵՐՄԱՆԻԱ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ 1,5 ՀԱԶԱՐ ԿՏԱԿՆԵՐ

Գերմանիայի ոստիկանությունը Սյունիքում հայտնաբերել է 1930-ական թվականներին նացիստների կողմից բռնագործված մոնեռնիստ նկարիչների 1,5 հազար կտավից բաղկացած հավաքածուն, որը համարվում էր կորած: Հայտնաբերված նկարների ընդհանուր գումարը, որի թվում կան Պաբլո Պիկասոյի, Անրի Մատիսի, Մարկ Շագալի, Էմիլ Նոլդի, Պուլյա Կլեյնի և ուրիշների գործերը, կազմում է մոտ 1 միլիարդ եվրո:

Ոստիկանությունը նկարները գտել էր 2011 թվականի գարնանը, թեպետ դա թաքցնում էին: Բոլոր կտավները հայտնաբերվել են 80-ամյա Կառնեյուս Գուրլիտի ձեռնահարկում: Վերջինիս հայրը երրորդ ռայխի ժամանակ արվեստագետ էր:

ԵՎՐԱՆԵՏԵԳՐՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎԻԼՆՅՈՒՄԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄԱԿԱՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Վիլյուսի գազաթափուկը Վրաստանի համար պատմական է: Վերջին տարվա ընթացքում Վրաստանը կարողացավ

կոնսուլիդացնել ժողովրդավարությունը, մենք անցկացրինք աննախադեպ եվրոպական ընտրություններ, սկսվել է բարեփոխումների մի ամբողջ շարք և պլանավորված են նորերը, որոնք

կաջակցեն Վրաստանի ինտեգրացմանը եվրոպական ընտանիքին»,- լրագրողներին հայտարարեց Մարգվելաշվիլին:

Նրա խոսքով՝ ԵՄ-ի հետ ասոցիացման համաձայնագրի նա-

խաստորագրմանը կհաջորդի բարդ աշխատանք: «Չուսով ենք, որ 2014 թվականի աշնանը մենք արդեն կկարողանանք ստորագրել այդ համաձայնագիրը»,- նշեց Մարգվելաշվիլին:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԺՆԵՎԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՈԼՈՐ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նում օգոստոսյան պատերազմից հետո եվրամիության, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի միջնորդության ձեռք բերած պայմանավորվածության հիման վրա: Բանակցություններին մասնակցում են Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, արխանգելսկի և հարավօստերակյան կողմերի ներկայացուցիչները:

Մեկնաբանելով ժնեբյան բանակցու-

թյունների հերթական ռաունդը, Եվրոպայի և Եվրասիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Էրիկ Ռուբինը հայտարարեց, որ բանակցություններում առաջընթացը դժվարությամբ է իրականացվում: «Ուղղություններից մեկը, որի մասին մենք խոսում էինք՝ սահմանի տեղափոխումն է, ինչը, ըստ իս, լուրջ հիմնախնդիր է: Մենք հայտարարեցինք, որ դա բացասական քայլ է և չի համապատասխանում միջազգային իրավունքի և մարտնչությանը»,- ասեց Ռուբինը:

Մյուս կողմից, Գերմանիայի Կրիստոֆ Կոխերը ասեց, որ Վրաստանի կողմից 2008 թվականի ստանձնած պատավորություններին, բացի այդ չի նպաստում տարածաշրջանային անվտանգության ու կայունությանը: Ժնեբի բանակցություններին մենք բացահայտեցինք պաշտպանում ենք Վրաստանի տարածքային ամբողջականությունը»,- ընդգծեց Էրիկ Ռուբինը:

Ժնեբի հերթական բանակցությունները կանցկացվեն դեկտեմբերի 17-18-ին:

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՐԽԱՋԻԱՅԻ ՇԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԳԻ ՄՏՈՐԱԳՐԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներ ստորագրել ժնեբի բանակցությունների հաջորդ ռաունդում, դեկտեմբերի 17-18-ին: Նրա խոսքերով, այդ փաստաթուղթը կարելու է մշտականություն ունի վրաց-արխանգելսկի հարաբերությունների համար:

Ձալկալիանի գոհունակու-

թյուն հայտնեց ժնեբի բանակցությունների հերթական ռաունդից, հայտարարելով, որ վրացական կողմը բանակցային իր գործընկերներին և համաձայնագրահներին կարողացավ հասցնել իր մտադրությունը: Հարավային Օսեթիայի բռնազավթված տարածքի երկայնքով, այսպես կոչված վարչական սահ-

մանի վրա փշալարերի անցկացման կապակցությամբ:

«Մենք համաձայնագրահներին ուշադրությունը բեռեցինք ռուսական կողմի հետ պատերազմ չվերսկսելու մասին պայմանագրի կնքման անհրաժեշտության վրա: Վրաստանը միակողմանիորեն արդեն ստանձնել է նման պարտավորություն

և այժմ Ռուսաստանի հերթն է»,- հայտարարեց նա:

Մինչ այդ, բանակցություններում ռուսական պատվիրակության ղեկավար, Ռուսաստանի արտաքին գործերի առաջին փոխնախարար Գրիգորի Կարասինը հայտարարեց, որ Վրաստանն այդ պայմանագիրը կնքելու է Սուխումի և Յիլինվալիի հետ:

ԵՐԿՔԱՂԱՔԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՆԱԼ ՃԱՆԿԱՅՈՂՆԵՐԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյունները առավելագույնս նպաստելու են նրան, որ Վրաստանի քաղաքացիություն ստանա հնարավորինս շատ մարդ:

«Հենց դրանից է կախված, թե Վրաստանը բնակեցված կլինի 3 միլիոն, 5 միլիոն կամ 7 միլիոն մարդկանգով: 7 միլիոնն էլ իրատեսական թիվ է, եթե հաշվի առնենք, թե որքան համերկրացիներ են ապրում արտասահմանում»,- նշեց Միխեիլ Սակաշվիլին:

Ինչ վերաբերում է ներկայացվելիք փաս-

տաթղթերին, ապա Վրաստանի քաղաքացիություն ստանալ ցանկացողները պետք է ներկայացնեն դիմում քաղաքացիության շնորհման մասին, սահմանված կարգով հաստատված այլ երկրի քաղաքացիության անձնագրի պատճենը, ծննդյան վկայականի պատճենը, եթե խոսքը վերաբերում է անչափահասի քաղաքացիության տալուն: Տվյալ պարագայում դիմումը ներկայացնում է ծնողը (օրինական ներկայացուցիչը), ընդ որում պետք է լինի երկու ծնողների համաձայնության գրավոր դիմումը: Եթե երեխան ծնվել է արտասահ-

մանում, ապա փաստաթուղթը պետք է բարգամավի և հաստատվի: Ինչ վերաբերում է 14-ից մինչև 18 տարեկան անչափահասներին, ապա անհրաժեշտ է նրանց համաձայնությունը:

Քաղաքացիություն ստանալ ցանկացողները պետք է դիմեն անձամբ կամ հաստատված երաշխավորագրով լիազորված անձանց միջոցով:

Դիմումներն ընդունվում են Վրաստանի նախագահի աշխատակազմում, Թբիլիսի, Վերուլաշվիլու փողոց 1 հասցեով, ամեն աշխատանքային օր ժամը 10-ից մինչև 18-ը:

ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԴՍԱԽԱՆԱԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՑ

Վրաստանի Գլխավոր դատախազ Արչիլ Կբիլաշվիլին նոյեմբերի 7-ին հատուկ հրավիրված ճեպատուլիսում հայտարարեց իր պաշտոնաթողության մասին:

Կբիլաշվիլու հայտարարությամբ, իր պաշտոնաթողությունը կապված չէ Վրաստանի նոր վարչապետի թեկնածու Իրակլի Ղարիբաշվիլու հետ: Մենք միասին շատ օրեր ենք անցկացրել և մշակել քրեականի դեմ պայքարի մեթոդները, թեպետ, վերջին հաշվով մեր միջև էլ կային տարածաշրջանային տարաբանություններ, ինչը, բնական է, սակայն իմ պաշտոնաթողությունը դրա հետ կապված չէ»,- ասաց Արչիլ Կբիլաշվիլին: Գլխավոր դատախազը հայտարարեց, որ մեկ տարվա ընթացքում ինքը հնարավոր ամեն ինչ արել է, որպեսզի անցկացնել դատախազության ազատականացումը և փոխեր համընդ-

հանուր ահաբեկչության համակարգը: Նա ընդգծեց, որ ինքը դատախազի պաշտոնն զբաղեցրել էր, այսպես կոչված, կոաբիտացիայի ժամանակ, ինչն էլ իր ազդեցությունը գործեց դատախազության գործունեության վրա: Արչիլ Կբիլաշվիլու հայտարարությամբ, իր պաշտոնաթողությունը մեծ մասամբ պայմանավորված է վարչապետ Բիծինա Իվանիշվիլու պաշտոնաթողության հետ, քանզի ինքը մտադիր է նրա կողքին կանգնել հասարակական հատվածում:



Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆՈՐԸՆԻՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՏԱՎԱՅՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱԴՆԻ ԿՏԵՂԱԿԱՅՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ըստ որում նորընտիր նախագահը մշեց, որ արդեն այդ հարցը քննարկել է կրթության նախարարի հետ, ինչից հետո ընդունվել է որոշում, որ այդ շենքում կտեղավորվի վրաց-ամերիկյան համալսարանը, որը կսկսի թբիլիսում գործել եկող տարվանից: «Դա չափազանց հետաքրքրական նախագիծ է, որն ուսա-


նողներին թույլ կտա ստանալ բարձրորակ կրթություն», - ասաց Մարգվելաշվիլին:

Իր հերթին, կրթության նախարար Թամար Սանիկիծեն պարզաբանեց, որ նախագահի պալատի շենքը «պետք է օգտագործվի Վրաստանում վրաց-ամերիկյան համալսարանի բացման» ԱՄՆ-ի Millennium Challenge Corporation կորպորացիայի երկրորդ վարկաբաժնով նախատես-

ված ծրագրի իրագործման համար»: «Կառավարությունն ունի իր շենքը համապատասխան ենթակառուցվածքով, եւ մենք նոր շենք չենք որոնում: Այնքան ժամանակ, քանի դեռ չի ավարտվել Աթոնելի փողոցում նախագահի նոր նստավայրի կառուցումը, նորընտիր նախագահի Գիորգի Մարգվելաշվիլին կաշխատի կառավար-



ության գրասենյակում: Նրա վարչակազմը կտեղավորվի 10-11-րդ հարկերում, իսկ 12-րդ հարկում կաշխատի Վրաստանի վարչապետը»: - հայտարարեց վարչապետի վարչակազմի ղեկավար Մայա Ցեխտիշվիլին:



ՎՐԱՍԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՐՋԱՅՑԸ ՄԵՐԶՔԱԼՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Վիլնյուսի գազաթափողովի նախօրեին, շրջայցով եղավ Լատվիայում եւ Լիտվայում, որտեղ նա հանդիպումներ ունեցավ մերձբալթյան այդ երկրների ղեկավարների հետ:

Չանդիպումներին հիմնականում անդրադարձան Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրման հետ առնչվող հարցերին:

Մերձբալթյան այդ երկրների ղեկավարները Վրաստանի ներկայացուցչին վստահեցրին, որ իրենք առավելագույնս կնպաստեն եվրոպական ինտեգրմանն ուղղված Վրաստանի ջանքերին:

ԽԱԹՈՒՆԱ ԱՍՆԻՉԵՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐ

Նոյեմբերի 3-ին անցկացվեց Վրաստանի Հանրապետական կուսակցության համագումարը, որին ներկա էին Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին եւ նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Համագումարին հաշվետվությանը ելույթ ունեցավ կուսակցության նախագահ, խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին:

Համագումարն ընտրեց կուսակցության 35 հոգուց բաղկացած քաղաքական խորհուրդը, որը, իր հերթին, ընտրեց կուսակցության նոր նախագահին: Քաղխորհրդի 35 անդամներից 32-ի աջակցությամբ Հանրապետական կուսակցության նոր նախագահ ընտրվեց կուսակցության կազմակերպչական քարտուղար Խաթունա Սամինիզեն:

Հանրապետականների համագումարին խոսքով ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին:

ԽՈՐՏԱԿԱԿԱԾ ՆԱԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄՈՒՄ ՎՐԱՑ ՆԱԿԱՍՏԻՆԵՐ ԵՆ

Նոյեմբերի 2-ին Սիեռա Լեոնեի դրոշի ներքո լողացող բեռնատար «Ստելլա» նավը հունական Կարպատոս կղզու մոտ եզեյան ծովում նավաբեկության ենթարկվեց: Անձնակազմի 5 անդամները, որոնք ազդուությամբ վրացիներ էին փրկվել են: Նավի նավապետը անհայտ կորել է:

Նոյեմբերի 8-ին եզեյան ծովում նավաբեկությունից հետո վրաց նավաստիները վերադարձան հայրենիք: Ինչ վերաբերում է նավապետ Լեւան Թեբաձեին, ապա նրա որոնումները ոչ մի արդյունքի չհանգեցրին:

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ԱԼԿՈՅՈԼԻ ԿԱՑՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքում կատարվելու է փոփոխություն, ըստ որի, առետրական օբյեկտներում, ռեստորաններում եւ բարերում կարգելվի անչափահասներին ալկոհոլային խմիչքների վաճառքը:

Օրենքի ընդունումից հետո վերոնշյալ օբյեկտներին տեղերին կպարտադրվի փակցնել համապատասխան վահանակները սույն գրանցումով: Հակառակ դեպքում, հաստատությունը կտուգանվի 100 լարիով: Իրավախախտման կրկնության դեպքում՝ տուգանքը կհասցվի 300 լարիի: Իսկ անչափահասի ալկոհոլի վաճառքի փաստի վավերացման դեպքում, տուգանքը կազմում է 500 լարի:

ՊԵՏՔՈՒՋԵ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՇՎԻ ՉԱՌՆՎԵՑԻՆ

Ներկա դրությամբ, երկրի կառավարությունը հաշվի չի առել 2014 թվականի պետությունների նախագծով խորհրդարանի ոչ մի դիտողություն: Խոհրդարանին է վերադարձվել բյուջեի հենց այն տարբերակը, որը քննարկման էր դրվել հոկտեմբերի 1-ին:

Ներկա դրությամբ, համապատասխան նախարարությունների հետ միասին, վերլուծության ենթ ենթարկվում խորհրդարանի առաջարկություններն ու դիտողությունները, թեպետ ներկայացված տարբերակում առաջադրած դիտողություններից ոչ մեկը հաշվի չի առնվել: Նախագիծը ներկայաց-

վել է բյուջետային օրենսգրքի պահանջների բավարարման նպատակով եւ նախնական տարբերակի համեմատությամբ դրանում փոփոխություններ չկան: Այդ հարցում առկա է երկու բացատրություն, մասնավորապես, նույնքերի կեսերին Վրաստան է ժամանելու Արժույթի միջազգային հիմնադ-

րամի առաքելությունը, որի հետ համաձայնեցվելու են 2014 թվականի բյուջեի հիմնական պարամետրերը, նաեւ՝ նախագահի պաշտոնակալումից հետո կառավարության իրավասությունները դադարեցվում են եւ խորհրդարանը կրկին հաստատելու է կառավարության կազմը: Նպատակահարմար է, որ բյուջեի նոր նախագիծը խորհրդարանի հաստատմանը ներկայացնի նոր կառավարությունը»,- ասված է պետբյուջեի նախագծին կցված բացատրագրում:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության տեղեկատվության, անցած շաբաթ երկրի բոլոր պետական մասնագիտական թրջեջներում եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում մեկնարկեց մասնագիտական ծրագր-

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՄՈՒՑՈՒՄԸ

Նոյեմբերի 4-ին Վրաստանում մեկնարկեց մասնագիտական ծրագրերով ուսուցումը:

Նոր ուսումնական տարվա առթիվ, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիծեն եղավ մասնագիտական «Սպելտոր» թրջեջում, շնորհավորեց ուսանողներին եւ նրան մաղթեց հաջողություններ:

Կրթության նախարարության տվյալներով, նոր ուսումնական տարում մասնագիտական ծրագրերով ավելի քան հարյուր մասնագիտություններ անվճար կյուրացնեն շուրջ 9 հազար ուսանողներ, որոնք

ուսումնական հաստատություններ են ընտրվել թեստավորման արդյունքներով: Ուսուցման տեղությունը՝ կախված մասնագիտությունից, տատանվում է 6-ից մինչեւ 2,5 տարի:

Այս տարի մասնագիտական ծրագրերից մեծ պահանջարկ էին վայելում զբոսաշրջության, մարքեթինգի, գրասենյակային մեքենայի, տրանսպորտի, համակարգիչի եւ համակարգչային ծրագրերի, շինարարի եւ դեղագործի մասնագիտությունները:

ԵԱՀԿ

ՎՐԱՍԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՄԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ-ն մտադիր է վերականգնել իր ներկայացուցչությունը Վրաստանում: Այդ մասին հայտարարել է կազմակերպության գլխավոր քարտուղար Լամբերտո Ջանիերո:

ԵԱՀԿ-ի ներկայացուցչությունը Վրաստանում իր աշխատանքը դադարեցրել է 2009 թվականի հունիսին: Կազմակերպության մշտական խորհրդին այդպես էլ չհաջողվեց փոխհամաձայնության գալ Վրաստանում եւ ԵԱՀԿ-ի դիտորդների առաքե-

լության աշխատանքը շարունակելու հարցում: «Խորհրդարանի ընտրությունների պահից Վրաստանի իշխանությունների հետ մեր ակտիվ փոխգործակցությունը պահպանվում է: Օրինակ, մեկ ամիս էլ չկա, որ Վրաստանի ԱԳ նախարարը Վիեննա-

յուն ելույթ ունեցավ ԵԱՀԿ-ի խորհրդում»,- մշեց գլխավոր քարտուղարը:

Այնուամենայնիվ, նրա խոսքով, «քանի որ երկրում ԵԱՀԿ-ն այլևս ներկայացուցչություն չունի, մենք կարող ենք միայն կողքից հետեւել փոփոխություններին»: «Ես, սակայն, ծրագրում եմ հաջորդ տարի այցելել Վրաստան. գրույցի գլխավոր թեմաներից մեկը կլինի ԵԱՀԿ-ի ներ-



կայացուցչության վերականգնումը: Դա մեզ կօգնի նախագծերն ավելի արդյունավետորեն իրականացնել տարածաշրջանում», - ասաց Ջանիերո:

ՔՐԵՍԱԿԱՆ

ԲԱՉՈ ԱՆԱԼԱԻԱՅԻՆ ՆԵՐՈՒՄ ԸՆՈՐԿՎԵՅՑ, ԹԵՊԵՏ ՆԱ ԿՄՆԱ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Չնայած Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Բաչո Ախալախային ներում չնորհելու մասին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու որոշմանը, Ախալախան կմնա կալանքի տակ:

Այդ մասին հայտարարեց նրա փաստաբան Գիորգի Օնիանին: Նրա խոսքով Ախալախան, կալանքի տակ կմնա, քանի որ Սանդրո Գիրգվիլանու սպանության գործով նրան որպես խափանման միջոց ընտրել են կալանքը: Ինչպես նույնի 3-ին Միխեիլ Սաակաշվիլին հայտարարել է Facebook սոցիալական ցանցի իր էջում, Ախալախային առա-

ջադրված մեղադրանքներն անհեթեթ են, եւ դրանք ներկայացրած դատախազությունն իրեն դնում է ծիծաղելի ու անթափվի լինելու: Հիշեցնենք, որ «բանտային խռովության» գործով դատարանը Բաչո Ախալախային դատապարտել էր երեք տարի եւ իմն ամսվա բանտարկության:

ՋՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՄ ՇՐՋԱԴԱՐՁԸ ՉԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ

Վրաստանի գլխավոր դատախազ Արչիլ Կրիշվալիլին չի բացառում, որ երկրի նախկին վարչապետ Ջուրաբ Ժվանիայի մահվան քննության գործում հնարավոր է շրջադարձ տեղի ունենա:

«Ռուսթավի-2» հեռուստաընկերության եթերում գլխավոր դատախազը հայտարարեց, որ, ներկա դրությամբ, ուսումնասիրվում են մի շարք հարցեր՝ գործի դնելով նաեւ գիտական հետազոտու-

թյունները:

Պատասխանելով հարցին՝ հնարավոր է ժվանիայի մահվան տարբերակը, ըստ որի՝ այն դժբախտ պատահարի հետեւանք է, ամբողջությամբ շրջվի, դատախազը մշեց:

«Պատասխանը դրական է: Այո, այն կարող է շրջվել: Սակայն ես չեմ ցանկանում, որ ընկալվի այնպես, որ դա անպայման տեղի կունենա, քանի որ դա կնշանակի բացառել այլ տարբերակները: Դեռեւս ոչինչ չի բացառվում»: Վրաստանի գլխավոր դատախազը չի բացառել նաեւ ժվանիայի դիակի արտաշիրիմումը:

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ՈՎ ԿՐԵԿԱՎԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԸ՝ ՆԱՀԱՆԳԱԴԵ՛ՏԸ, ԹԵ՛ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Պրակտիկորեն 27-ի նախագահական ընտրություններից հետո, երկրամասերի նախագահի լիազորները ներկայացրին պաշտոնաթղթերն ու դիմումները: Չրաժարականի որոշումը ընդունեց նաև Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում Վրաստանի նախագահի լիազոր Իվանե (Վանո) Ծիկլաուրին: «Ազգային շարժման» քաղաքական խորհրդի ավարտին, նա նախագահի գրասենյակ դիմեց համապատասխան հայտարարությամբ: Երկրամասային վարչության լիազորի բացատրությամբ, իր կողմից նման որոշում կայացնելու պատճառը դարձավ քաղաքական նոր ուժի մուտքը իշխանություն:

Որպես տարածաշրջանի լիազոր Իվանե Ծիկլաուրին աշխատել է մոտ մեկ տարի: Նրա խոսքով, տվյալ ժամանակահատվածում նախագահի աշխատակազմը զգալիորեն օգնել է տարերքից տուժած տեղի բնակչությանը: Հարցվողների մի մասը գտնում է, որ երկրում նոր նախագահ ընտրելուց հետո, նախանգապետի կողմից հրաժարական տալու որոշումը ճիշտ քայլ է:

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանային լիազորի գրասենյակում այս պահի դրությամբ մոտ 50 հոգի է աշխատում: Ըստ նրանց, մինչ այս պահը վարչակազմը աշխատում էր սովորական ռեժիմով: Սամցխե-Ջավախեթի նախանգապետի տեղակալ Գեյա Դեմետրաձեի պարզաբանմամբ, նախանգապետի հրաժարականի որոշման մասին իրազեկվել է լրատվամիջոցներից, իսկ ինքն անձամբ իր հրաժարականը փաստող դիմում դեռևս չի գրել, չնայած գտնում է, որ երկրում զարգացող իրադրությունների արդյունքում, իրենք եւս կիրառվեն իրենց պաշտոններից:

2014 թվականի տեղական ինքնակառավարման ընտրություններից հետո, կառավարությունը մտադիր է տարածաշրջաններում ստեղծել հատուկ խորհուրդներ: Մուկիցիպալիտետի սակրեբուլոյից ավելի բարձր իրավասություններ ունեցող ծառայությունների հիմնական պարտականությունը կլինի երկրամասի վարչակազմի ընտրությունը: Բացի այդ, ըստ փոփոխությունների, նախանգապետը պատասխանատու կլինի ոչ թե նախագահի, այլ վարչապետի եւ կառավարության առջեւ:

Մինչ կընտրվի երկրամասի վարչակազմը, տարածաշրջանում լուրեր են պտտվում նախանգապետի հնարավոր թեկնածուների մասին: Նախանգապետի պաշտոնում Սամցխե-Ջավախեթիում տեսնում են մինչ «Վարդերի հեղափոխություն» այս պաշտոնը զբաղեցնող Գեյա Վարաբյանը: Ըստ նախանգապետի վարչության պետ Ռեազ Մուսլիմաձեի նա «Վրացական երազանք» Ախալցխեի շտաբի պետ Մալխազ Ժու-

ժունաձեին: Այս փաստը ՋԼՍ-ները չեն հաստատում: Իսկ Մալխազ Ժունաձեն շեշտում է, որ մշտապես կգտնվի այնտեղ, ուր պահանջում է հայրենիքը:

Իսկ այսօրվա Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի լիազոր Վանո Ծիկլաուրին, ասում են, կապալտնավարի միջոցով բավարարվի հրաժարականի վերաբերյալ դիմումը:

Ասենք, որ Վանո Ծիկլաուրին նշանակվել էր նախանգապետ 2012 թվականի հուլիսի 6-ին, մինչ այդ նախանգապետի պաշտոնը զբաղեցնում էր Լաշա Ճկադուրան:

Ըստ սահմանադրական փոփոխությունների, որոնք ուժի մեջ կմտնեն նախագահի երդմնակալության արարողությունից հետո, պետության կողմից լիազորվող նախանգապետը հաշվետու կլինի կառավարության առջեւ: Այսուհետև այս պաշտոնում նրան կնշանակվի կամ կհեռացվի ոչ թե նախագահը, այլ կառավարությունը:

Տեղական ինքնակառավարման հետ հարաբերությունների պետական դեպարտամենտի ղեկավար Իրակլի Մելաշվիլին, նոր օրենսդրության համաձայն, պարզաբանեց նախանգապետների իրավունքներն ու պարտավորությունները. «Նախագահի երդմնակալությունից հետո սահմանադրությունում փոփոխությունները կմտնեն ուժի մեջ: Նախանգապետը պաշտոնաթող կլինեն եւ ուժի մեջ կմտնեն նրանց նշանակման եւ հաստատման նոր կարգը: Նախանգապետը էլ չեն լինի «փոխարքաներ», որոնք նախկինում օգտվում էին անհամահասկալի լիազորություններից: Նրանք կդառնան կենտրոնական իշխանության ներկայացուցիչներ եւ իրավասու չեն լինի ընդունելու ինքնակառավարման ներքին օրենսդրության վերահսկողության գործառույթը կփոխանցվի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարությանը: Նոյեմբերի 17-ից հետո պետք է ավարտվի «Կառավարության ակտ» մեխանիզմը, որն էլ հաստատվում է վարչապետը»,- նշեց Իրակլի Մելաշվիլին:

ՍԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԵՐԿՐՈՒՄ ԶԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՎՈՐ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԿՓՈՒՎԻ

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Վվիիկաշվիլին մեկնաբանեց Արժույթի միջազգային հիմնադրամի կանխագուշակումը, ըստ որի՝ տարեվերջին ծրագրած 6 տոկոսի փոխարեն Վրաստանը հնարավոր է ունենա տնտեսության 2,5 տոկոսի աճ:

«Բնականաբար, 6-ի փոխարեն 2,5 տոկոսանոց տնտեսական աճը ոչ մի բավականություն չի կարող պատճառել, բնականաբար, դա ունի իր պատճառները: Երկրում քաղաքական լարվածություն էր, ընդդիմությունը հնարավորինս արգելակում էր մեզ: Հուսով եմ, որ նախագահական ընտրություններից եւ կառավարության նոր կազմի հաստատումից հետո երկրում չկանխագուշակվող բիզնես միջավայրը կդադարի գոյություն ունենալուց: Երկրում կստեղծվի նպաստավոր

միջավայր, եւ ակտիվությունը զգալիորեն կբարձրանա»,- հայտարարեց Վվիիկաշվիլին: Էկոնոմիկայի նախարարն անդրադարձավ նաև տնտեսական հետազոտությունների կենտրոնի տվյալներին, ըստ որի՝ 2013 թվականի առաջին կեսին ներդրումները 18 տոկոսով ավելի քիչ էին, քան անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցում:

«Այդ տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանում: 2013 թվականի առաջին երկու եռամսյակներում ներդրումների ծա-



վալը կազմել է 460 միլիոն լարի, անցյալ տարվա նույն ժամանակամիջոցում այն 480 միլիոն էր: Տարբերությունը 4 տոկոս է եւ դա հասկանալի է, եթե հաշվի առնենք այն իրավիճակը, որի մեջ գտնվում էր երկիրը այս տարի: Առկա են բոլոր պայմանները ենթադրելու, որ երրորդ եւ չորրորդ եռամսյակներում մեզ մոտ ցուցանիշներն ավելի բարձր կլինեն»,- հայտարարեց նախարարը:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌՈՒՄՈՎ, ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ 8-ՐԴՆ Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 37-Ը

DOING BUSINESS
MEASURING BUSINESS REGULATIONS

Doing Business-2014 զեկույցում Վրաստանը եւս մեկ հորիզոնականով բարելավել է իր դիրքերը եւ ներկայումս զբաղեցնում է 8-րդ տեղը՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են Սինգապուրը, Չինլանդը, Նոր Զելանդիան, ԱՄՆ-ը, Դանիան, Մալդիվները եւ Չիլի:

լազիան եւ Հարավային Կորեան:

Հայաստանն էլ զգալիորեն բարելավել է դիրքը. երկրի գործարար միջավայրը լավագույնն է ԱՊՀ երկրների շարքում եւ երկրորդն է տարածաշրջանում՝ զիջելով միայն Վրաստանին: 2014 թվականի զեկույցում Հայաստանը զբաղեցրել է 37-րդ տեղը՝ զիջելով Բելգիային եւ առաջ անցնելով Ֆրանսիայից:

Նախորդ զեկույցի համեմատ, Հայաստանը բարելավել է դիրքերը երեք աստիճանով: Համաշխարհային բանկի եւ Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից 2013 իրապարակված՝ «Գնահատումների ընկալումը ՓՄՁ-ների համար-2014» վարկանիշային զեկույցը կազմվել է գործարարների եւ պետական մարմինների կողմից լրացրած հարցաթերթիկի ամփոփման հիման վրա:

Հարցմանը մասնակցել է 189 պետություն: Առաջին հորիզոնականը զբաղեցրել է Սինգապուրը: Լա-

վագույն տասնյակում են Չինլանդը, Նոր Զելանդիան, ԱՄՆ-ը, Դանիան, Մալդիվները, Կորեան, Վրաստանը, Նորվեգիան եւ Միացյալ Թագավորությունը:

Համաշխարհային բանկի «Doing Business» («Գործարարությանը զբաղվելը») զեկույցը գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման եւ տնտեսական աճի վրա՝ հնարավորություն տալով իրականացնել միջերկրային համեմատություններ հետազոտված 189 երկրների միջև 10 ոլորտներում՝ ընկերության հիմնադրում, շինարարական թույլտվությունների ստացում, էլեկտրականության միացում, վարկերի ստացում, էլեկտրականության միացում, ներդրողների պաշտպանություն, հարկերի վճարում, արտաքին առևտուր, պայմանագրերի կիրարկում, սնանկություն լուծում:

ԻՆՔՆԱԿՄՈՒՎԱՐՈՒՄ

ԴԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱ. «ԻՆՔՆԱԿՄՈՒՎԱՐՈՒՄԸ ԶԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՏԵՂՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ»

Վրաստանի տարածաշրջանային զարգացման նախարարությունը փորձագետներին ներկայացրեց ինքնակառավարման նոր օրենսգիրքը: Ինչպես հայտարարեց նախարար Դավիթ Նարմանիան, Վրաստանում ինքնակառավարման հետ կապված հիմնախնդիրներն առկա են, եւ ինքնակառավարումը թույլ է, որպեսզի կարողանա տեղում լուծել ծագող հիմնախնդիրները:



Ինչպես նշեց նախարարը, հենց այդ պատճառով էլ նոր իշխանությունն առաջնահերթային է համարում այդ հիմնախնդրի լուծումը: Ըստ Դավիթ Նարմանիայի պարզաբանման «Վրաստանում օրենսգրքը ավելացնում է ինքնակառավարման քաղաքների թիվը, եւ այդ կարգավիճակը կշնորհի այն քաղաքներին, որոնք բնակչությունը 15 հազարից ավելի է: Օրենսգիրքը նախատեսում է նաեւ հասարակական խորհուրդների ստեղծում: Դավիթ Նարմանիայի հայտարարությամբ, նախանգապետների ինստիտուտին զուգահեռ կստեղծվի կոլեգիալ խորհուրդ, որտեղ կներկայացվեն սակրեբուլոյի անդամները: «Այդ ոլորտի բարեփոխումների արդյունքում, երկրի մասշտաբով կիրականացվի գյուղերի եւ քաղաքների սոցիալ-տնտեսական իրական զարգացումը: Տեղական իշխանությունն էլ ավելի կմոտե-

նա բնակչությանը, ինչը կբարձրացնի տեղական նշանակության հարցերի լուծման գործում քաղաքացիների ներգրավման մակարդակը»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան: Նախարարի պարզաբանմամբ, ինքնակառավարման նոր մոդելի նպատակը՝ անցնել եվրոպական ինքնակառավարման համակարգին: «Արդյունքում տեղական ինքնակառավարման 64 միավորի փոխարեն կունենանք 100-ից ավելի միավոր: Գլխավոր նպատակը կայանում է նրանում, որ տեղական ինքնակառավարման մարմինները կարողանան արագորեն լուծել տեղի հիմնախնդիրները»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան՝ հավելելով, որ նոր մոդելը ժախտի ավելացման չի հանգեցնի: «Ուղղակի գումարները, որոնք հավաքվում են պետական բյուջեում, աստիճանաբար կբաշխվեն տեղական բյուջեների վրա»,- ընդգծեց նախարարը:

ՄՈՑԻԱԿԱՆ

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԻՊՈԹԵԿԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Վրաստանի խորհրդարան մուտք է գործել օրենսդրական փոփոխությունների ծրար, որի նպատակն է թեթևացնել այն քաղաքացիների վիճակը, ովքեր ունեն հիպոթեկային պարտքեր, եւ կարգավորել այդ ոլորտում առկա նորմերը:

Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքում կատարվելիք փոփոխությունների օրինանախագիծը, որը երկրի կառավարության նախաձեռնությամբ մշակվել է Արդարադատության նախարարության կողմից, նախատեսում է փոփոխությունների կատարում, «Վարույթի կատարման մասին» եւ «Նտարների մասին» օրենքներում: Ելնելով թեմայի հրատապությունից, Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքում կատարվելիք փոփոխությունները ներառված են «Օրենսդրական տեղեկատուի» պաշտոնական կայքէջում matsne.gov.ge: Փոփոխությունների համաձայն,

կոսադրույքին, որը նախորդ տարի կոմերցիոն բանկերի կողմից տրվել է հիպոթեկային համակարգով: Վերոնշյալ սահմանափակումը նախատեսում է շուկայի մրցակցությունը, եւ այն արդարադատության կողմից, նախատեսում է փոփոխությունների կատարում, «Վարույթի կատարման մասին» եւ «Նտարների մասին» օրենքներում: Ելնելով թեմայի հրատապությունից, Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքում կատարվելիք փոփոխությունները ներառված են «Օրենսդրական տեղեկատուի» պաշտոնական կայքէջում matsne.gov.ge: Փոփոխությունների համաձայն,

օրինանախագիծն սպասակն է կարգավորել Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքում վարկային եւ հիպոթեկային պայմանագրերի կարգավորման նորմը եւ արդարության սկզբունքի պաշտպանության համար հիմնել պարտապանների իրավական պաշտպանության լրացուցիչ մեխանիզմներ: Մասնավորապես, պարտապանի է դառնում ֆիզիկական անձանց միջև վարկային պայմանագրի նոտարական հաստատումը, որով ապահովվում է հիպոթեկային եւ անենամայա տոկոսադրույքի չափը: Փոփոխություններով նախատեսված է նաեւ գործընթացում հնարավոր կրճատման, սեկվեստրի մասնակցության հնարավորությունը: Ընդ որում, նոտարը պարտավոր է կողմնակցող պարզաբանել պայմանագրային պարտավորությունների չկատարման հետևանքները:

Հիպոթեկային պայմանագրի ամենամայա տոկոսադրույքը չպետք է 2.5 անգամ գերազանցի վարկի միջին թվաքանակային շուկայական տո-